խեցւոյ . . . ի կալանաւորութեան իւրում. ի ՌԾՂԷ թուականիս Հայոց։ Եւ ապագրեալ ի Հայրապետութեան մեծի Աթոռոյն Էջմիածնի Տեառն Յակոբայ սրբազնակատար Կաթուղիկոսին ամենայն Հայոց՝ շարահիւսողի գրքոյս»։ Իսկ ապագրութեան յիշատակարանի մէջ գրուած է « . . . զնորոգ շարադրեցեալ գիրքս Աղօթից ի նորապսակ Հայրապետէն մերմէ Տեառն Յակոբայ Ծայրագոյն Քահանայապետի և Կաթուղիկոսի ամենայն Հայոց՝ իբրեւ ընծայ նոր հօտին իւրում Հայկական կոչեցեալ զանուն սորին՝ Հայ Նեղելոց և Գոհարան»։

Ա. Հատորն՝ Հայ Նեղելոց —

Բ. » Գոհարան։

Գիրքս գտնուում է մեր արժանապատիւ անկեղծ և մտերիմ բարեկամ Վարդան քահանայի Թունիեաց Վաղարշապատցւոյ մօտ։

Իսկ Զամախեցւոյ համար այսպէս գրէ Աբրահամ կաթուղիկոս գլ. ԽԲ. (յերես 65,66. 1870 տիպ Էջմիածնի.)

«Այլ և զոմանս ի ջորոյն յղեալ էի ի Շամախի՝ ընդ Տաթեւու Մկրտիչ վարդապետին Դափանցւոյ, զի բերցէ և նա խորակ մեզ՝ և անասնոցն. զի յետի օրերն թանկացաւ ցորեան և գարին ի Մուղան, և եղեւ Թարվիզի լիտրն Ա. զօլաթա և Ժ. թիմին, որ է ԲՃ. դրամ. ի փետրվարի ԻԱ. եկն Մկրտիչ վարդապետն՝ բարձեալ Դ. ջորօք ալիւր՝ եփաց հաց, գարի և գինի՝ ունելով ընդ իւր և զԻսրայէլ վարդապետն Մեսարու վանից, Բ քահանայք և Ե.Զ. իշխանք, որում խնդիրք ուզէին ի մէնջ վասն Բ. իրաց. մի վասն ճէզիէին, զոր շատ պահանջէին, խնդրեցին առաջի սահմանին տալ մարդու՝ Դ. զուրուշ և կէս։ Այլ և վասն բնակութեան, զի զՇամախին աւերեալ էր և քակեալ Վալինամաթն, յորժամ էառ յառաջ գան զգալն ի Կէնճէ. և Ը. ժամու ճանապարհ հեռու ի Շամախուցն՝ հողէ բերդ մի շինեալ՝ հրամայեաց զմնացեալ Շամախեցիքն անդ բնակեցուցանել. զի և էր օդն ապականեալ, և տեղն շողային, և ջուրն պակաս, և տաճկունք որք են Լակզիք և Սուննիք՝ վշտացուցանէին և տառապեցուցանէին զԱզգն մեր։ Վասնորոյ խնդրեցին բազում անգամ կրկին բնակիլ ի աւերեալ